# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4025-Ա « 18 » օգոստոսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԼՈՆԴՈՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի 12.08.2026 թվականի №Ն/53306-26 գրությունը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում, ESCRS 44-րդ համագումարին, ինչպես նաև Leadership, Business & Innovation (LBI) ծրագրին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի սեպտեմբերի 11-ից 15-ը ներառյալ, գործուղել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մայրաքաղաք Լոնդոն՝ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Սարգիս Մադաթյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Ռուբեն Գրիգորյան | «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն |
| Արմինե Զոհրաբյան | «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն |
| Լենա Մելքոնյան | «Արաբկիր» առողջության կենտրոնի տնօրեն |

2.Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Գրիգորյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Արմինե Զոհրաբյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, «Արաբկիր» առողջության կենտրոնի տնօրեն Լենա Մելքոնյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Արաբկիր» առողջության կենտրոնի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի բացակայության ընթացքում քաղաքապետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին:

4. «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Ռուբեն Գրիգորյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՓԲԸ-ի բուժական գծով տնօրենի տեղակալ Հարություն Ղռմաջյանին:

5. «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Արմինե Զոհրաբյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՓԲԸ-ի բուժական գծով տնօրենի տեղակալ Նունե Դավթյանին:

6. «Արաբկիր» առողջության կենտրոնի տնօրեն Լենա Մելքոնյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն առողջության կենտրոնի բուժական գծով տնօրենի տեղակալ Նաիրա Բաբինյանին:

7.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**